ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-1

ք. Երևան «19» դեկտեմբերի 2019թ.

<<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն՝ Ս. Խաչատրյանի, որը գործում է <<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արփիմեդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ղազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և **այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝** վճարել դրա համար:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր /<<Գնումների մասին>>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Հննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **8237090 (ութ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար ինսուն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

[illegible] մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կողմերի միջև Համաձայնագրի ստորագրման պահից** և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

[illegible] համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհամարվում պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը

օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ	«Արփիմեդ» ՍՊԸ
ք. Երևան Նուբարաշեն ավան 1/3	ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջ. 19 շենք
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ Երեբունի մ/ճ	«Արդշինբանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ
Հ/Հ 1630068068481	Հ/Հ 2471000494250010
ՀՎՀՀ 00475611	ՀՎՀՀ 03519299
	Էլ. հասցե՝info@arpimed.com
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

«19» դեկտեմբերի 2019թ.
ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-1 ծածկագրով պայմա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***

1	33661134	Ցիկլոդոլ 2մգ N48	Տես Հավելված 1.1-ում	Տրիհեքսիֆինիդիլ դեղահաբ 2մգ N48	հաբ	5,3	477000	90000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

2	33661139	Հալոպերիդոլ 5մգ N48	Տես Հավելված 1.1-ում	Հալոպերիդոլ 5մգ N48 դեղահաբ	հաբ	11,5	943000	82000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

3	33691194	Տրիֆտազի ն 5մգ N 48	Տես Հավելվա ծ 1.1-ում	Տրիֆլուոպերազի ն 5 մգ դեղահաբ	հաբ	5,3	371000	70000	Ք. Երևան, Նուբար աշեն 1/3	Համա ձայն պատվ երի	Սույն պայմանագիրն ուժի մ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօր ընթացում:
5	33691197	Լևոմեպրոմ ազին 25մգ N50	Տես Հավելվա ծ 1.1-ում	Լևոմեպրոմազին 25մգ դեղահատ N50	հաբ	25,2	630000	25000	Ք. Երևան, Նուբար աշեն 1/3	Համա ձայն պատվ երի	Սույն պայմանագիրն ուժի մ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօր ընթացում:

6	33661137	Լորազեպամ 2 մգ N24	Տես Հավելված 1.1-ում	Լորազեպամ 2 մգ N24 դեղահաբ	հաբ	13,5	675000	50000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագրի մտնելու օրվանից պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարարման ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ պատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:
7	33691195	Ազալեպտին 100մգ N 50	Տես Հավելված 1.1-ում	Կլոզապին 100մգ դեղահաբ	հաբ	33	1287000	39000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերը ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարարման ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ պատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

8	33661136	Դիազեպամ 10մգ N24	Տես Հավելված 1.1-ում	Դիազեպամ 10մգ N24	հաբ	9,25	888000	96000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՞ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:
13	33691176	Ֆենազեպամ 1մգ N24	Տես Հավելված 1.1-ում	Բռոմհիդրոքլորֆենիլ, բենզոդիազեպին 1մգ, դեղահաբ	հաբ	8,2	143500	17500	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՞ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:
18	33691196	Ռիսպերիդոն 2մգ N30	Տես Հավելված 1.1-ում	Ռիսպերիդոն 2մգ N30	հաբ	24	960000	40000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ

20	33661161	Օլանզապին 10մգ N30	Տես Հավելված 1.1-ում	Օլանզապին 10մգ N30	հաբ	168	1092000	6500	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի

23	33661142	Ամիտրիպտ իլին	Տես Հավելվա ծ 1.1-ում	Ամիտրիպտիլին amitriptyline դեղահատ 25մգ	հաբ	8	120000	15000	Ք. Երևան, Նուբար աշեն 1/3	Համա ձայն պատվ երի	Սույն պայմանագիրն ուժի մ մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

25	33691225	Բենզոնալ 100մգ	Տես Հավելված 1.1-ում	Բենզոբարբիտալ 100մգ	հաբ	18,75	22500	1200	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվերներ ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մի համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

26	33661128	Կարբամազեպին 200մգ	Տես Հավելված 1.1-ում	Ֆինլեպին 200մգ	հաբ	10,5	525000	50000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին սկսած համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարարում ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ վիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

32	33661116	Լիդոկային 5% 15մլ	Տես Հավելված 1.1-ում	Հեղուկ (արտաքին օգտագործման համար)Տեղային անզգայացնող ազդեցությամբ դեղ	ցողաշիթ	1056	15840	15	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

33	33611170	Նոշ-Արփի 40մգ	Տես Հավելված 1.1-ում	Նո-շպա40մգ դրոտավերին	հաբ	6,25	18750	3000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մի համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

47	33621230	Ֆոլեաթթու 5մգ	Տես Հավելվածի 1.1-ում	Կլոր, տափակ, գլանաձև դեղահատեր, պոլիվիտամիններ, միկրոտարրեր,	հաբ	5,5	9900	1800	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

51	33621710	Ատենոլոլ 50մգ	Տես Հավելված 1.1-ում	Ատենոլոլ, atenolol դեղահատ 50 մգ	հաբ	3	3600	1200	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին մ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

53	33621510	Կապոտրիլ 50մգ	Տես Հավելված 1.1-ում	Կապոտրիլ 50մգ	հաբ	10,5	42000	4000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին փ համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարար ավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ՝ վիրատուից պատվերըստանա հետո 3 աշխատանքայինօրվ ընթացում:

60	33621590	Ֆուռոսեմի դ 40մգ N40	Տես Հավելված 1.1-ում	Ֆուռոսեմիդ 40մգ N40 դեղահատ .	հաբ	3	3000	1000	Ք. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշվա օրացուցային օր հետո՝1-ին համար /եթե մատակարար համաձայնվումմատակարա ավելի շուտ/ մատակարարմա փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգա վիրատուից պատվերըստան հետո 3 աշխատանքայինօ ընթացում:

66	33651131	Կոտրիմոքսազոլ 480մգ	Տես Հավելված 1.1-ում	Կոտրիմոքսազոլ 480մգ սուլֆամետոկսիդ դեղահաբ N20	հաբ	10	10000	1000	Q. Երևան, Նուբարաշեն 1/3	Համաձայն պատվերի	Սույն պայմանագիրն ուժի մտնելու օրվանից հետո պատվիրատուից պատվեր ստանալու օրվանից հաշված օրացուցային օր հետո՝1-ին համար /եթե մատակարարը համաձայնվումմատակարարումավելի շուտ/ մատակարարման փուլերի դեպքում՝յուրաքանչյուրանգամ պատվիրատուից պատվերըստանալուց հետո 3 աշխատանքայինօրվա ընթացում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: *դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման*
դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարվանից ավելի պիտանելիության ժամկետ ունենալու դեպքում հանձնման պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանելիության ժ
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի 12 ամիս,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

Դեղերը մատակարարելիս՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկ Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությ կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների վերաբերյալ եզրակացություն: (29 օգոստոսի 2019 թվականի 1108-Ն որոշում՝ Կցվում է):

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպ*

ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկ
ը:

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական մի*
նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

<<<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
ք. Երևան Նուբարաշեն ավան 1/3
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ Էրեբունի մ/ճ
Հ/Հ 163068068481
ՀՎՀՀ 00475611

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արփիմեդ» ՍՊԸ
ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջ. 19 շենք
«Արդշինբանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ
Հ/Հ 2471000494250010
ՀՎՀՀ 03519299
Էլ. Հասցե՝info@arpimed.com

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվ
«19» դեկտեմբերի 2019թ. կ
ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-1 ծածկագրով պայման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Վճարման ժամկետը/վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
<<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
ք. Երևան Նուբարաշեն ավան 1/3
Հայէկոնոմ բանկ ԲԲԸ Էրեբունի մ/ճ
Հ/Հ 1630680684811
ՀՎՀՀ 00475611

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Արփիմեդ» ՍՊԸ
ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջ. 19 շենք
«Արդշինբանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ
Հ/Հ 2471000494250010
ՀՎՀՀ 03519299
Էլ. հասցե՝info@arpimed.com

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5.1
ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-1 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «_____»_____ 20 թ.**

« ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վաչագան Ղազարյանի՝ նույնականացման քարտ 001371699 տրված 09.01.2013թ 019-ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-1ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Կարդային բյուրո):

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՈՀԵՎԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

« ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Աբովյան, 2-րդ մ/շրջ., 19 շենք
ընկերության հասցեն

«Արդշին բանկ» Աբովյան մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2471000494250010
ընկերության բանկային հաշվեհամարը

03519299
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

տնօրեն Վաչագան Ղազարյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

/ /

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն "« ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Արդշինբանկի Աբովյանի մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝2471000494250010

7. Վճարողի ՀՎՀՀ՝03519299

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00475611

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) գանձապետարանի հաշվարկային հաշիվ՝ 163068068481

14.Գումարը (թվերով և բառերով)՝823709 ութհարյուր քսաներեք հազար յոթ հարյուր ինը դրամ

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ / AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

* *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*